

# ԱԶԳԻԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزதாக جريدة يومية سياسية وأدبية - المبرة للثقافة والإبداع**

1500 Լ.Ո. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 100 (20856) ԵՐԵՎԱՆԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2001 10 ԷՁ

## ՆԱԽԱԳԱՀ ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԹՈՒՆՈՒՉ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ վաղը՝ Չորեքշաբթի թունուզի իր պաշտօնակից Ձեյնէյ Ապիտին Պրն Ալիի հրաւերին ընդառաջելով երկօրեայ այցելութեան մը համար կը մեկնի Թունուզ:

Նախագահական պալատի ընդհանուր տնօրէնութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ նախագահ Լահուտի պիտի ընկերակցի առաջին տիկինը, փոխ վարչապետ Իսամ Ֆարէս, ընդհանուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն ԿՕՐ. Ժամիլ Սայէտ, Թունուզի մէջ Լիբանանի դեսպան Ռեմոն Ռուֆայէյ եւ մամուլի եւ խմբագիրներու սենտիքաներու նախագահներ Մոհամէտ Պապպէթի եւ Մըլիհէմ Քարամ:

Այս այցելութիւնը առիթ պիտի հանդիսանայ քննարկելու երկկողմանի յարաբերութեանց ամրապնդումը եւ երկու երկիրները հետաքրքրող հարցերը, ըսաւ հաղորդագրութիւնը:

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱԶՄԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏ ՄԸ

Կ'ԸՍԵ ՆԵՊԻՆՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի Սուրի մէջ կրթական համալիրի մը բացումին ընթացքին արտասանած իր խօսքին մէջ զիտել տուաւ, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի ղեկավարութիւնը չըջանային կայունութիւնը կը տանի ազդեցութիւնը ուղղութեամբ: Ան ըսաւ, որ Սուրիոյ նախագահ Պաշ-շար Ասատ եւ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ Ապտալա իշխանը այս իմաստով զոգուցացումներ կատարած են:

Պըրրի վերահաստատեց, թէ Իսրայէլեան սպառնալիքին դիմաց անհրաժեշտ է կազմել լրիւնանեան ազգային ծակատ մը:

## ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ԳԵՐՄԱՆԻԱ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ այսօր պաշտօնական այցելութեամբ կը մեկնի Գերմանիա, ուր մայրաքաղաք Պերլինի մէջ կը տեսակցի վարչապետ Կերխարտ Շրէտերի հետ. անոնք թէեւ առաւելաբար կը քննարկեն տնտեսական գործակցութեան եւ երկկողմանի յարաբերութեանց առընչուող հարցեր, բայց նաեւ կ'արծարծեն Միջին Արեւելքի թղթածրարին կապուած խնդիրներ:

Երեսուն տարուան ընթացքին առաջին անգամն է, որ բարձրագոյն մակարդակի սուրիական անձնատուրութիւն մը պաշտօնական այցելութիւն կը կատարէ Գերմանիա:

ԸՍՏ «ՄԱՍՐԻԻ» ՕՐԱԹԵՐԹԻՆ

## ԼԻԲԱՆԱՆՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԳԱՂՏՆՕՐԷՆ ԹԱՓԱՆՑԱԾ Է ԻՍՐԱՅԷԼ

Իսրայէլեան «Մաարի» օրաթերթը երէկ յայտնեց, որ իրանեան «յեղափոխութեան պահակ»ներու անդամներէն երիտասարդ մը անցեալ շաբաթ Լիբանանէն գաղտնօրէն թափանցած է Իսրայէլ:

Ըստ «Մաարի»ի, 24 տարեկան երիտասարդը Իսրայէլեան իշխանութեանց կողմէ հարցաքննուելու ատեն ըսած է, թէ ինք Իսրայէլ ապաստանած է, որովհետեւ Իրանի կրօնական ղեկավարութեան ուղղած իր քննադատութիւններուն պատճառով հալածանքի կ'ենթարկուէր:

Ան նաեւ ըսած է, որ ինք «յեղափոխական պահակ»ներու հինգ այլ անդամներու հետ գործուողում էր Լիբանան, եւ յայտնած՝ թէ խմբակի բոլոր անդամները Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմիի որդիին «մօտիկ» անձեր են:

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ



Իսրայէլացի զինուորներ կը քննեն անճանապարհական գործողութեան համար գործածուած ինքնաշարժի մնացած կտորները:

Համառ, որ Կիրակի օր յայտարարած էր, թէ անձնասպանական գործողութիւններ կատարելու պատրաստ կամաւորներ ունի. երէկ Կապալի մէջ իսրայէլեան բանակի մէկ անցարգելին մօտ կատարեց անձնասպանական գործողութիւն մը: Համառ խոստացած էր լուծել վրէժը քանի մը օր առաջ սպաննուած 11 տարեկան մանչուկի մը: Իսկ Կիրակիէն երկուշաբթի լուսնոյ գիշերուան ընթացքին, իսլամական պինեալներ իսրայէլացի պինտուրական մը սպաննեցին Հեյլոնի մօտ, ուրկէ ճիւղով կ'անցնէր իսրայէլացին:

Պաղեստինեան ապահովութեան ուժերը յայտնեցին, որ ձերբակալած են Համառի անդամ մը, որ կը գտնուէր ականուած ինքնաշարժին հետեւող ինքնաշարժի մը մէջ: Ըստ պաղեստինեան աղբիւրներուն, այս պաղեստինցին բռնաբերուած պալլթեցումէն ետեւ, որ քացի պաղեստինցիէն, այլ գոհեր ու վիրաւորներ չարձականալու ետեւ: Համառ իսլամական շարժումը անմիջապէս հրապարակեց յայտարարութիւն մը՝ ստանձնելու համար գործողութեան պատասխանատուութիւնը:

Շար-ը՝ էջ 10

## ԵԱՅԿԻ ՄԻՆՍԵԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԿԱՆ

Կ'ԸՍԵ ՄԻՇԷԼ ԼԵԳԻՍ

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանը՝ Միշէլ Լեգրա երէկ հանդիպում ունեցած է լրագրողներու հետ, որոնք հարցումներ ուղղած են ԵԱՀԿի Մինսքի խմբակի համաձայնագրահետեւումն կողմէ ներկայացուելիք նոր առաջարկներուն մասին:

Առանց մանրամասնութիւններ յայտնելու, ֆրանսացի դեսպանը ըսած է, թէ համաձայնագրահետեւումն ունի տարբեր մօտեցումներ, սակայն հիմնական հարցերուն գծով տարբերութիւններ չնչին են: Ան աւելցուցած է, թէ Միացեալ Նահանգները, Ռուսիան ու Ֆրանսան համակարծիք են, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը պէտք է շուտով եւ միայն խաղաղ միջոցներով լուծուի:

ՄԻՆՍԵԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐՈՒ ՎԵՏ  
ՀԱՆԳԻՊՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

## ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ՏՐՈՒՊՆԻՔՈՎԻ ՅԵՏ

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ հանդիպում ունեցած է Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Վիտալի Տրուպիքովի հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուած են Հայաստանի յարաբերութիւններու զարգացման հեռանկարները եւ Սեպտեմբերին Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի Հայաստան կատարելիք այցելութեան նախապատրաստական աշխատանքներուն առնչուող հարցեր: Կողմերը անդրադարձած են նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին խաղաղ լուծման, նշելով որ հիմնական քննարկումները տեղի պիտի ունենան այսօր կայանալիք ԵԱՀԿի Մինսքի խմբակի համաձայնագրահետեւումն հետ հանդիպումին ընթացքին:

## ԹԵՀՐԱՆ Կ'ԱՐՏԱՔՍԷ ԱԶԵՐԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐ ՄԸ

Ազրպէյճանական «Զերիալ» օրաթերթը իր տեղեկութիւնները քաղելով Իրանի մէջ լոյս տեսնող «Ֆաճըլ Ազրպէյճան» թերթէն, հաղորդեց, որ Իրանի մէջ Ազրպէյճանի դեսպանատան խորհրդական Էյնուլ Մադաթի «անբաղձալի անձ» յայտարարուած է. ան արհամարհական յայտարարութիւններ րրած էր Իրանի յեղափոխութեան եւ անոր առաջնորդներուն հասցէին: Թեհրանի իշխանութիւնները Մադաթիին պահանջած են լքել երկիրը: Մադաթի թեհրանի մէջ բացուելիք Ազրպէյճանի հիւպատոսարանին մէջ բարձրաստիճան պաշտօն մը ստանձնելու թեկնածու էր:

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը հերքած է իրանական թերթին հրապարակած լուրը:

Ըստ նախարարութեան Էյնուլ Մադաթիի պաշտօնավարութեան ժամանակաշրջանը աւարտած է, եւ այդ պատճառով ան պիտի վերադառնայ Ազրպէյճան:

ԹՈՒՐԹԻՆ

## ՀԱՅԱԴՈՒԼԻ ԴԻՄԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՄԸ ԵՒՍ ՄԱՀԱՅԱԻ

ԱՆԳԱՐԱ, 9 (ՌՈՅԹԸՐԸ).— Թուրք ձախակողմեան բանտարկեալ մը, որ ամիսներէ ի վեր հացադուլի դիմած է բազմաթիւ այլ բանտարկեալներու կողքին, մահացաւ երէկ, կը հաղորդեն մարդկային իրաւանց մարմնի պատասխանատուներ: Հացադուլի դիմած մահացող բանտարկեալներուն թիւը այսպէսով կը բարձրանայ 28ի:

Թուրքիոյ մէջ ձախակողմեան բանտարկեալները ամիսներէ ի վեր հացադուլի դիմած են իրենց բողոք մեծ բանտերէ փոքր խուցերու մէջ իրենց տեղափոխման դէմ: Անոնք կ'ըսեն, որ այս նոր ձեռնարկ, շատ աւելի դուրին «կեր» կը դառնան բանտապահներու քմայքներուն...

Երէկուան մահացող բանտարկեալը 30 տարեկան է՝ Ալի Քոչ: Ան 12 տարուան բանտարկութեան դատապարտուած էր ձախակողմեան զինեալ խմբակի մը անդամակցութեան յանցանքով:

## ԹԷԼ ԱԻԻԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ՝ ԱԿԱՆՈՒԱԾ ՌՈՒՄԲԻ ՄԸ ԿԵՂԾ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ


ԹԷԼ ԱԻԻԻ, 9 (ՌՈՅԹԸՐԸ).— Թէլ Ալիւի «Պեն Կուրիոն» օդակայանին մէջ երէկ իրարանցում մը տեղի ունեցած է, երբ անծանօթ մը հեռաձայնած է, թէ ականուած ուժեր մը գետնորւած է օդակայանին մէջ: Ալիւի ուշ ի յայտ եկած է, թէ սպանալիքը կեղծ էր:

Սակայն այս արարքը սուղ արժած է ճամբորդներուն: Տեղի ունեցած են թռիչքներու բազմաթիւ ուղացումներ, շատեր նոյնիսկ փախուցած են իրենց օդանաւը, որովհետեւ օդակայանի մուտքին ստեղծուած մեծ խճողումին պատճառով անկարելի եղած է հասնիլ կամ մուտք գործել օդակայան: Ոստիկանութիւնը մանրակրկիտ քննութիւն կատարած է եւ ի յայտ եկած է, թէ նման բան չկայ:

Այսուհանդերձ իսրայէլեան իշխանութիւնները միշտ ալ զոգուել են այս գծով եւ շատ կը վախճան պաղեստինեան նման արարքներէ: Առ այդ, Թէլ Ալիւէն ճամբորդներուն միշտ ալ կը թելադրուի թռիչքէն չորս օր առաջ ներկայանալ օդակայան, ապահովական խիստ միջոցառումներու պատճառով:

It may cost as much as other brands

# BUT



## you get 10% more power for FREE!

Other Brands  
9,000 BTU  
12,000 BTU

TOSHIBA  
10,000 BTU  
13,000 BTU

In Touch with Tomorrow  
**TOSHIBA**

Exclusive distributor UNILEC: Tel.: 04.718 444 - Fax: 04.718 555  
Available at all authorized Toshiba dealers.

## ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

# ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՄԱՐԶԸ ԱՌՈՂՋ Է

Կ'ԸՍԷ ՌԻԱՏ ՍԱԼԱՄԷ

Լիբանանի կեղծոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ երէկ զրամատանային գործելաձեւերու միջազգային զարգացումներուն մասին խորհրդաժողովի բացումին արտասանուած իր խօսքին մէջ վստահեցուց, որ Լիբանանի մէջ զրամատանային մարզը առողջ է եւ լուրջ չնկողութեան տակ է:

Միշտ ճշգրիտ չեն ըլլար այն տեղեկութիւնները, զորս կը հաղորդեն զրամատաններու գործունէութեան զնահատման միջազգային հաստատութիւնները, որոնք տապալակներու ատեն սովորականէն աւելի խստապահանջ կ'ըլլան չրջանի զրամատաններու պարագային, ըսաւ Սալամէ: Ան նկատել տուաւ, որ զրամ «լուալու» դէմ օրէնքի վաւերացումն ու գործադրութիւնը յստակօրէն ցոյց կու տան, թէ Լիբանան վճռած է որդեգրել այս բնագաւառի միջազգային չափանիշները:

Նոյն խորհրդաժողովին խօսք առաւ զրամատաններուն վերահսկող յանձնախումբի նախագահ Ուալիա Ալամէատին, որ ընդգծեց կարեւորութիւնը հետաքրքրուելու լիբանանեան զրամատաններու ապագային տալիք արդիւնքներով:

Ալամէատին նաեւ կարեւորեց թմրեցուցիչ բոյսերու ցանքի վերսկսման երեւոյթը. մեզ շահագրգռողը այն է, որ այս երեւոյթի հասոյթները վնաս չհասցեն մեր զրամատաններու վարկին ու համբաւին, ըսաւ ան:

Ալամէատին բացատրեց, որ զրամ «լուալու» դէմ օրէնքի հիմամբ զրամատաններու պատասխանատու պաշտօնեաները պատասխանատու են իրենց գիտութեամբ կամ բժախնդրութեան պակասին պատճառով թմրեցուցիչի հասոյթներու «լուացք»ին:

## ՖԻԼԻՓԻՆԵԱՆ ՌԻԺԵՐ ՁԵՐԱԿԱԼԱԾ ԵՆ ԶԻՆԵԱԼ ԴԵԿԱԿԱՐ ՄԸ

ՄԱՆԻԼԱ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).– Ֆիլիպինեան ուժեր երէկ ձերբակալած են իսլամ ծայրայեղ Ադու Սալլաֆ գլխեւ խմբակի ղեկավարներէն Նապոլի Սադպուլլան, ծանօթ Ալ Շերիֆ ծածկանունով: Բանակի կրամանապար գործարար Խալիֆ Տր Լու Սանոսուսաւ, որ այս ձերբակալութիւնը մեծ իրագործում է եւ շաւր բան կրնայ յայտարարել Ադու Սալլաֆ խմբակին մասին: Յիշեալ խմբակը ամերիկացի եւ արեւմտաեւրոպայի աշխարհապաշտներ առեւտրական է երկրին կարաւային շրջանակներուն մէջ:

Յարդ ամէնէն բարձրաստիճան ղեկավարն է Ադու Սալլաֆ խմբակին, որ կը ձերբակալու: Սադպուլլա 40 տարեկան է. ան էր, որ ուղղակի սփռումներով հանդէս կու գար յաջողութեամբ իր ձայնասփիւռի կայաններէ:

Պեքալան ու զինուորական շրջանակներ կ'ողջունեն Սադպուլլայի ձերբակալութիւնը, զայն ներկայացնելով իբրեւ իսլամական այս խմբակցութեան «ուղեգիր»:

«Ան կը ծրագրէր ու կը կազմակերպէր Ադու Սալլաֆի բոլոր գործողութիւնները, իսկ մնացեալ կրամանապարները միայն կը գործադրէին անոր ծրագրերը», կ'ըսէ գործարար Մեքուր, բանակին բանբերը:

### ՀԱՅ ԱԻԵՏ. ՔՈԼԷՃ

(Մեքսիք Փողոց Հեռ. 349816)

2001–2002 Տարեշրջան

- 1.– 2001–2002 տարեշրջանին Հայ Աւետարանական Քոլէճը պիտի ունենայ Բողոքեան 12րդ պաշալորեալ դասարան:
- 2.– Նորեկ աշակերտները պարտին կանխաւ դիմել: Նորեկներուն դիմումները կ'ընդունին ամէն օր Յուլիսին եւ Սեպտեմբերին. կէսօրէ առաջ ժամը 9:30ին 12:30ին բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն: Դպրոցի գրասենեակը փակ է Օգոստոսին:
- 3.– 2001–2002ին օթոպիւսի սպասարկութիւն պիտի ունենանք բոլոր շրջաններուն համար:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԳԵՌՈԳ ՀԱՐՊՈՅԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

## ՎԵՐԱՄՈՒՏ

Երկուշաբթի, 1 Հոկտեմբեր 2001

Միջնակարգի եւ երկրորդականի դասարաններու:

Հինգշաբթի, 4 Հոկտեմբեր 2001

Մանկապարտեպի եւ նախակրթարանի:

Արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ Յուլիս 13, առաւօտեան ժամը 8:30ին 13:00, եւ կը վերսկսին Սեպտեմբեր 3ին:

●ՇՆՆՕԹ.– Վարժարանին ուսումնական ծրագիրը անգլիական թեքումով է:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԶԻՆԱԴՈՒԼԸ

Պահպանելու համար քանի մը օր առաջ հաստատուած պինտոյն, միջազգային միջնորդներ երէկ Մակեդոնիոյ ալպանական փոքրամասնութեան ղեկավարներուն ներկայացուցած են տազնապի լուծման նոր տարբերակ մը: Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան կողմէ առաջադրուող այս առաջարկին հիման վրայ, Մակեդոնիոյ ալպանական գաղութը պիտի ստանայ քաղաքական որոշակիւթիւններ եւ ալպաներէնը պիտի ըլլայ պաշտօնական լեզու:

Ալպանացիներու ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար Արպիկ Խաֆերի յայտարարած է, թէ ներկայացուած առաջարկը տազնապին լուծում մը չէ: Խաֆերի նշած է, թէ անհրաժեշտ է ՕԹՆԻ խաղաղարար ուժեր տեղադրել պատերազմական



Եւրոպացի եւ ամերիկացի պատուիրակները՝ Ֆրանսուա Լեոթար (ձախից) եւ Ճէյմս Փարտուզըրոյցի պահուց

շրջաններուն մէջ, եւ արմատական բարեփոխումներու ենթարկել Մակեդոնիոյ սահմանադրութիւնը: Միջազգային միջնորդներ, անդրադառնալով ալպանացիներու պահանջներուն, յայտարարած են, թէ կարճ ժամանակամիջոցի մը համար կարելի է խաղաղարար ուժեր ուղարկել Մակեդոնիա. այս ուժերը իրենք պիտի կատարեն ապստամբներու պէնքերը հաւաքելու աշխատանքը:

## ՄԱՐՈՔ ԿԸ ՏԱՌԱՊԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԴԱՆԴԱՂ ԸՆԹԱՅՔԷՆ

Կ'ԸՍԷ ԻԺՆԱՆ ԱԼԱՌԻ

ՌԱՊԱԹ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).– Մարոքի ժողովրդավարականացման դանդաղ ընթացքը վստահեցուց է, յայտնեց թագաւորական ընտանիքի անդամ իշխան Մուլայ Հիշամ Ալաուի:

«Ռոյթթըր»-ի հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, Ալաուի զիտել տուաւ, որ Մարոք կը տառապի բարեկարգումների չկիրարկելու հարցէն: Ժողովուրդը մեծ յոյսեր դրած էր երիտասարդ թագաւորին՝ Մոհամէտ

Զ-ի վրայ, որ խոստացած էր բարեկարգումներ կատարել:

Մուլայ Հիշամ թագաւորին զարմկին է եւ թիւ երկու գահաժառանգը: Ան ծանօթ է իրրեւ ազատամիտ ու լայնատես քաղաքական անձնաւորութիւն մը, ինչպէս նաեւ՝ մտաւորական մը: Երկու շարաթ առաջ, ան քաղաքական փոփոխիկ մը բարձրացուց երբ Ֆրանսիոյ վերականգնումի մը կողմէ հրապարակուած հարցազրոյցին մէջ ըսաւ,

որ Մարոք կ'ապրի «քաղաքական անդամալուծութեան» հանգրգանքի մը եւ թէ ժամանակը հասած է արագ ու արմատական բարեկարգումներուն: Խուսափելու համար քաղաքացիական պատերազմի մը, ինչպէս որ կը պատահի սահմանակից Ալճերիոյ մէջ: Իշխանը ըսած էր նաեւ, որ ինք պարզապէս չհազարնէր հնչեցնել, որովհետեւ թէ իշխանութիւնները ծախքով են բարեկարգումները չիրականանան՝ երկիրը ծանր հարուած մը պիտի ստանայ եւ ամէն ինչ նահանջ պիտի արձանագրէ:

Հասան Բ. թագաւորի մահէն ետք, իշխանութեան հասած Մոհամէտ Զ., խոստացած էր շուտով ձեռնարկել բարեկարգումներու: Աշխատանքը սկսաւ, սակայն չչարունակուեցաւ, դիտել կու տան մեկնարկներ: Անոնք կ'ըսեն, որ Մոհամէտ թագաւոր առաջին տարին միայն ծրագրերուն ձեռնարկեց՝ խոստանալով ամբողջական ժողովրդավարութիւն հաստատել երկրին մէջ: Մեկնարկները զիտել կու տան նաեւ, որ բարեկարգումներու ուղիւ շաղկապ մէջ մեծ դերակատարութիւն ունին պահպանողականները, որոնք կը մերժեն ընկերային, քաղաքական ու տնտեսական բարեկարգումները:

Իշխան Ալաուիի հարցազրոյցը ու նկատողութիւնները Մարոքի մէջ տիրող իրավիճակին մասին, քննադատուեցան յատկապէս պահպանողականներուն կողմէ, որոնք զարմանք յայտնեցին, որ թագաւորական ընտանիքի անդամ մը ինչպէս կրնայ կասկածի ու հարցականի տակ առնել երկրին իշխանութիւնները:

ԸՍՏ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐՈՒ

## ԻՐԱՔ ՓՈՐՁԱՐԿԱԾ Է ՆՈՐ ՀՐԹԻՈՒՆԵՐ

Արեւմտեան ուժեր կ'ուսումնասիրեն Իրաքի կողմէ օգտագործուող միջցամաքամասային իրթիոններու արհեստագիտութեան փորձարկելու համար հակօդային իրթիոններ, յայտնեց արեւմտեան պաշտպանութեան աղբիւր մը:

Յիշեալ աղբիւրը հաղորդեց, որ Յուլիս 2ին, Իրաք արձակած Լ հակօդային ՍԸՄ իրթիոններ օգտագործելով միջցամաքամասային արհեստագիտութիւնը, երկուք մը, որ հետաքրքրական կը թուի Արեւմուտքին համար: Հրթիռները արձակուած էին Իրաքի հարաւային շրջանէն՝ Քուէյթի սահմանին մօտ: Արեւմտեան աղբիւրը ակնյոյց, որ անցնող երեք տարիներուն, երբ ՄԸԿի հակողութիւնն ու զենքի քննիչները բացակայեցան Իրաքէն, Պաղատա ձեռնարկեց կատարելագործելու զինուորական իր կարողութիւններն ու կարելիութիւնները՝ դառնալով անկի վտանգաւոր սպառնալիք մը:

Յիշեալ իրողութիւններով մտահոգ Լ յատկապէս Քուէյթ, որ կը վախճայ, որ Իրաք միջցամաքամասային իրթիոններու արհեստագիտութիւնը օգտագործելով ՍԸՄ իրթիոններ արձակել իր սահմաններէն ներս:

Միւս կողմէ, Իրաք դատապարտեց թրքական ուժերուն հիւսիսային շրջաններ ներխուժումը որ սովորութիւն դարձած էր հաղորդեց ԻՆԱ լրատու գործակալութիւնը:

Արաքական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի ուղղուած նամակի մը մէջ, Իրաքի փոխ վարչապետ Թաբէք Ազիզ կը գրէր, որ թրքական բանակը զինուորական նոր յարձակումի մը ձեռնարկած Լ Իրաքի հիւսիսային քաղաքակ շրջանին դէմ: Ազիզ ակնյոյց, որ Յուլիս 17 - 19ի միջեւ, թրքական յիսուն հրատայիւր մտան Արպիի շրջանը: Քառասուն այլ հրատայիւր մտած են Տահուր, Ջալսո եւ Պաւմարնի, ակնյոյց Ազիզ, որ կոչ ուղղեց Լիկային միջամտելու եւ արգելելու խուրդիւր որդեգրած միջոցառումները, որոնք կը բռնաբարեն Իրաքի անկախութիւնն ու գերիշխանութիւնը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱՆ

## ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽԱՂԱՂ ՀԱՒԱՔԻ ԿՈՉ

ԹԵՀՐԱՆ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).– Իրանի ուսանողական մեծագոյն շարժումը կոչ ուղղեց խաղաղ հաւաքի մը թեհարանի համալսարանին մէջ՝ նշելու համար երկրորդ ամեակը համալսարանին զինեթիկի բաժնին վրայ գործուած յարձակումին ու անոր ընթացքին արձանագրուած զոհերուն ու վիրաւորներուն:

Ուսանողական շարժումին կեղծոնական գրասենեակին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կոչ կ'ուղղէր ուսանողական բոլոր շարժումներուն ու քաղաքական անձնաւորութիւններուն մասնակցելու ու խօսք առնելու հաւաքին:

1999ի խոսքութիւններուն առաջին ամեակին (անցեալ տարի) հանդիսութիւնները աւարտած էին խոսքութիւններով, որոնց ընթացքին տասնեակ մը վիրաւորներ արձանագրուեցան:

Ուսանողական շարժումներու ղեկավարներ կոչ կ'ուղղեն բարեկարգչական անձնաւորութիւններու եւ կառավարութեան վերջ տալու աշխուրդեան շարժումներու վաղաք արարքներուն եւ արդարութիւն հաստատելու: Շարժումի ղեկավարներէն՝ Մեհտի թագաթագալի ըսաւ, որ իրենց պատգամը յստակ է՝ մերժել վաղաքութիւնն ու բռնարարքները:

«Թեհրան Թալմ»-ը, որ պահպանողական օրաթերթ մըն է, իր ձայնը միացուց ուսանողներուն, պահանջելով, որ երկու տարի առաջ գործուած յարձակումներուն զոհերուն վրէժը պէտք է լուծուի եւ պատասխանատուները արժանի պատիժին ենթարկուին: Օրաթերթը կը գրէր նաեւ, որ երկու տարի առաջ գոյութիւն ունեցող աշխուժ ու գործունեայ ուսանողական շարժումին յիշատակը մնացած է հիմա: Օրաթերթը կ'աւելցնէր նաեւ, որ երկու տարի է ի վեր Իրանի ուսանողները կը զգան, որ անարգուած են ու դաւաճանուած:

### ՄԻՒԹԱՐԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ

ԵՐԿՍԵՌՎԱՐԺԱՐԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Միթթեան վարժարանի տնօրէնութիւնը կը տեղեկացնէ, թէ 2001 - 2002 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին մինչեւ 27 Յուլիս 2001, ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

Վարժարանն ունի 2 բաժին. 1) Ֆրանսերէն - արաբերէն - հայերէն, երկրորդական լեզուն՝ անգլերէն:

2) Անգլերէն - արաբերէն - հայերէն, երկրորդական լեզուն՝ ֆրանսերէն:

3) Օթոքալ ապահովուած է բոլոր շրջաններուն:

4) Ժառանգաւորներ կ'ընդունին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել վարժարանի տնօրէնութեան՝ հեռաձայնի հետեւեալ թիւերուն:

05 - 451115 - 05 - 451124:

Ա. Աւդալեան նշեց, որ կը նախատեսուի Ռուսիոյ մէջ ապրող հայերուն համար «Հայկական արկածը ներս» հիմնել Ռուսիոյ ամբողջ տարածքին՝ իրենց եկեղեցիներով, դպրոցներով եւ մշակութային օճախներով:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ  
ՊԱՀԱՆՋՈՒՄ Է  
ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ  
ԶՍՊՈՒԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ  
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ  
ՀԵՆՐԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑՈՒՄ. Դեռևս անցել է արտանդից էինք  
ստում՝ եւ բարձրաճանձում, թէ 2001ր մեզ համար  
լոբիեմական է, քրիստոնէութեան ընդունման  
1700ամեակ ենք տօնում, անկախութեան տասնամե-  
ակ էւ այլն: Ըստ ձեզ, հայերս որպէս 1700 տարի  
առաջ քրիստոնէութիւն ընդունած՝ քրիստոնեայ հա-  
ւատարմեր նկրտում կրոն<sup>ը</sup> ժողովուրդ ենք, թէ...  
Այն տպաւորութիւնն ունենմ, թէ այս տարեկարճն էլ  
վերածուց ընդամէնը կենաց ճորի:

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ — Ես ոչ միայն այդ տպաւորութիւնն ունեմ, աւելին էլ էի սպասում: Գիտէի, որ այդպէս պիտի լինի: Պատճառը շատ պարզ է՝ 1700 տարուան քրիստոնեայ ժողովուրդը չուներ լաւականաչափ մասւոր ներուժ ունեցող եկեղեցու սպասաւորներ: Հարցը հաւատին չի վերաբերում, այլ՝ հոգեբանութեանը: Մի լաւ ենք գործածում՝ մեկնաբանութիւն, ես սպասում եմ ստեղծաթելակերպ կամ մտայնութիւն: Մտածելակերպով մեր ժողովուրդը որքան<sup>1</sup> վ է քրիստոնեայ: Այն, ինչ տեսնում ենք, քրիստոնեական չէ:

Լրջօրէն չեն կարողանում ըմբռնել շօները, տօնախմբութիւնները, միջոցառումները, Թարգմանչաս տօնը եւ այլն: Քրիստոնէութիւն ատուածը նախ եւ առաջ լարեցական վարդապետութիւն է եւ պահանջուն է համեստութիւն ու դպաստծուն թիւն: Այսօր ամենատհաճը ոչ միայն յորելեանին նախապատրաստուելու հարցում առհասարակ փարիսեցիութիւնն է, հրապարակաւ աղաղակելն ու շատ խօսելը: Ասածոյ անուրը շատ են տալիս. սա փարիսեցիութիւն է՝ լապարձակապէս հակառակ քրիստոնէական դաւանանքին:

Մի անգամ ասել եմ՝ Երեւանում քանդուած լողոր  
եկեղեցիները տեղեքում կարելի էր զնել յուշաքարեր  
եւ զրել, որ այստեղ եղել է այս դարում կառուցուած  
այս եկեղեցիին եւ քանդուել է այս թիւին: Որպէսզի  
երեւանցիին էլ, Երեւան մտնողի էլ իմանար, որ քա-  
ղաքում եղել են միջնադարեան շինութիւններ: Մինչ-  
դեռ մարդիկ ուրիշ լատին մասին են մտածում: Ուրիշ  
կերպ են պատկերացնում՝ անպայման խորհրդային  
տոնախմբութեան դրոշմներով ու սովորութիւննե-  
րով:

Հ. - Ի դեպ, 1700ամենակին նուիրուած միջոցա-  
նուճկները համայնագող լսեմնախումբի մասին  
Մեծ Զինուորային Խորունկ Զարուբխեաններ կանխա-  
տեսող էր. թէ ամբարն Հայաստանը հիւրերով  
լեփ-լեցուն է լինելու: Մոլորիսկ «պղծեջս»-ծրագիր-  
ներ» էր գծում՝ քաղաքացիներ իր բնակարանը վար-  
ձով կր տալ, գիւղացիներ մածունը կը վանառի եւ  
այլ նկատարքքաշարժ բաներ:

Պ.— Ես այն ժամանակ ասացի՝ այդպիսի բան չի լինելու: Հայաստանում զրօսաշրջութեան հետ յոյս կապելը մեծնամեծ խարհուլթիւնն է: Զրօսաշրջութեան երկիր լինելու համար պէտք է ծառայութիւնները այնքան կատարելագործութեմ համակարգ ունենալ, որից անսահման հոգու է Հայաստանը եւ որը պահանջում է հսկայական միջոցներ նախ եւ առաջ: Սուրիան չի կարողանում դառնալ զրօսաշրջութեան երկիր, թէպէտ տասնապատիկ աւելի յուշարձանական այնտեղ, մի քանի քաղաքակրթութիւն կայ՝ խեթականից մինչեւ վաղ բրիտանոհական դարեր: Ինչո՞ւ չի դառնում, որովհետեւ երկիրը չունի նւթական այն հնարաւորութիւնները, որ պայմաններ ստեղծէր դրա համար: Զրօսաշրջիկները փնտռում են յարմարաւէտ տեղեր, հիւրանոցներ, յարմար, գեղեցիկ ծառայութիւն: Մեզ մօտ այդ չկայ:

Հայաստանը որպէս հին քաղաքակրթութեան երկիր շատ խորն ու հետաքրքիր է ուսումնասիրող գիտնականի, լայց ոչ՝ այցելու աչքի համար: Կիսազրագետի, զրօսաշրջիկի համար Հայաստանը քիչ լան ունի զարմացնելու: Իսկ զրօսաշրջիկն ուզում է զարմանալ: Նա միայն կը զարմանայ Արարատի պատկերի վրայ, որ չի տեսել ոչ մի տեղ այնքան գեղեցիկ, ինչպէս երեւում է Երեւանից: Եկէք պարզ խօսենք: Սա ի՞նչ ինքնախաբէութիւն է: Մի լան ես որոշում, որը դու չես: Յետոյ երեւում ես, որ չստացուեց, ոչ ոք քեզ այդպէս չընկալեց:

Հ.- Մեզանում՝ օրեցօր անգնանում է աղանդա-  
ւորների բանակը: Ի թիւս արտագաղթի, սա եւս հա-  
յուժիւնից հայ խոյզ գործօն է: Իսկ եկեղեցին եւ  
եկեղեցու սպանաւորները կարծես այս երեւոյթի  
հետ կապ պահանջ: Նրանք 1700ամեակ են հշոյում:

Պ.— Նրանց առանձնապէս դա չի մտահոգում: Ի  
ղէպ, ես չառ կտակածում եմ մեր հոգեւորականնե-  
րից շատերի ճշմարիտ հաւատին: Մարդու հետ խօսում  
ես եւ անմիջապէս երեւում է, թէ որքանով կապ ու-  
նի Աստուծոյ հետ:

Ըստ իս, եկեղեցուս չի կարելի պայքարի կոչել աղանդաւորութեան դէմ: Նա իր միջոցները պիտի ունենայ: Մենք չենք կարող նրան առաջարկել եւ սովորեցնել, թէ ի՛նչ անի: Իսկ, ընդհանրապէս, դաւանանքն եւ հաւատարի հարցերը դիտակէտ ընդհանրման, արամարանութեան զատին չեն դրուում: Այդպէս խօսակցութեան մէջ մտնելով աղանդաւորի հետ, մենք կարող է չշահենք, նա կը շահի: Այստեղ աւելի շատ ոչ թէ հաւատարի ու դաւանանքի հարցն է, այլ՝ եկեղեցու: Ի վերջոյ, բոլորը կարող են դատել եւ ճիշդ լինել: Աղանդաւորն էլ կարող է շատ ճիշդ դատել եւ համոզել: Ամէն կարգի մեկնաբանութեան մէջ միտում կայ: Աղանդաւորն ունի իր միտումը, պաշտօնական եկեղեցին՝ իր: Բայց մեզ պէտք է մէկ հաւատարի հիմնարկութիւն, մէկ դաւանանք՝ միասնական լինելու համար:

Гумен, 1.9.10

«ԱՆՆԱԽԱԴԵՊ ՆՈՐՈՅԹՆԵՐ»  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ

Չ ա կ ե ր տ ն ե ր ու մ  
նշուածը ծանօթ լառա-  
կապակցութիւն է, չէ՞:  
Հեռուստացոյցը միացը-  
նուծ էս, եւ խօսող սուպ-  
րակը ուստատարյով ու  
զնվզնվալով յայտնուս  
է պատահին: Լոթոյի  
գովազդն է: Յայտնուծ  
է ու սկսուծ գայթակղել  
«տաս» (ինչպէս գովազդի  
հեղինակներն են գրուծ),  
քսան, յիսուծ, հարիւր  
հազար դրամի հասնող եւ  
զերարանցող շահուծա-  
րով: Եւ այս ամբողջ  
գոյնզգոյն գայթակղան-  
քին նախորդում է «ան-  
նախադէպ նորոյթ» անզը-  
րապէս լառակապակ-  
ցութիւնը, որ լաքագան-  
չութեան ձեւով օրուան  
ընթացքում լազմիցս  
հնչում է հեռուստանթե-  
րից՝ մուրճի հարուածը  
պէս թրխկալով մեր ու-  
ղեղներին: Այնքան է  
թրխկացրել, որ արդէն  
չենք էլ նկատուծ մի  
պարզ հակասութիւն.  
նորոյթը չի կարող լինել  
աննախադէպ, իւրաքան-  
չիւր նորոյթ արդէն իսկ  
աննախադէպ է: Միւս  
լոթոների գովազդներն էլ  
«չեն գիշում» այս մէկին:

Սակայն գովազդները լուծ նախաբեմն են այն թատերականացումած «Հանդիսութեան», որ Հիմնականում Շարաթ եւ Կիրակի օրերին կարելի է դիտել հայկական հեռուստատեսութեամբ:

Մինչ լուռն նվթին՝ թուե-  
րի արտաբերմանն անց-  
նելը, աւանդոյթին հա-  
ւատարիմ, ժամանակ է  
յատկացուած այսպէս  
կոչուեալ երաժշտական  
մասին («ոչ միայն հա-  
ցիւ», ինչպէս ասում են),  
որի ընթացքում բեմում  
երեւալու հնարաւորու-  
թիւն են ստանում տա-  
րբի տարիքի ու սեռի ան-  
ձինք. չնայած այդ տար-  
բերութեանը՝ նրանք միա-  
ւորում են գլխաւորը՝  
անճաշակութիւնն ու  
հպանցիկ առնչութիւնն  
արուեստին: Հետաքրք-  
րական մի օրինաւորու-  
թիւն, որ հագուստի է պէ-  
տախտում. այդ երաժշ-  
տական մասն իրակա-  
նացնողները հաղորդա-  
վարի կողմից մշտապէս  
ներկայացուած են որպէս  
հարայալար, թէպէտ սո-  
վորայար լինում են ան-  
յայտ: Մինչ նրանք պա-  
րուժ կամ երգում են, տե-  
սախցիկը սահուն է նաեւ  
դաշխնում նստածներին  
դէմքերով. զրանք, ի-  
հարկէ, «դէմքեր» են. ըմ-  
բոշխնելով «հոգեւոր»  
հաճոյք՝ նրանք անհամ-  
բեր սպասում են իրենց  
յոյսը, հաւատն ու սէրը  
մարմնաւորող թուերին:  
Այդպէս է, թէպէտ՝ ցա-  
ւալի. Հայաստանի բնակ-  
չութեան յոյսը, հաւատն  
ու սէրը հիմա միայն լու-  
թոներին են առնչուում, եւ  
այդ գեղեցիկ ու ոգեղէն  
հասկացութիւններին ար-  
ժէքը հիմա միայն թուե-  
րով է պայմանաւոր-  
ւած: Այդ «յոյս, հա-  
ւատ, սէրն» առանձին  
անհատներով չի բաւ-  
արարում, այլ ամբողջա-  
կան ընտանիքներէ է հա-  
ւաքադրում: Պատեհեացը  
նո՞ւմ էք, ընտանեկան  
ինչպիսի՞ համերաշխու-  
թիւն. առաւօտան ու  
երեկոյանն ուտում են  
հեռուտանցոյցի պատա-  
ռի առջեւ, թուերի  
«երաժշտութիւնը»  
լսում, բովանդակալիչ  
ժամանակ անցկացնում  
ընտանեկան ակնթարթ-  
է, էլի:

մերկ փորերով, փխցնրը  
ձեռքերին եւ անիմաս-  
տութիւնն աչքերում,  
դեղչէեւ միայն անզլերէն  
խօսեն, առաջին պատա-  
հածը (քանի որ ազգովին  
փրկխոսփանքը ենք ու քա-  
ղաքական գործիչները)  
կարող է իր «հանճարեղ»  
մտքերն արտայայտել հե-  
ռուստատետեով խեամբ՝  
նախապէս վճարելով կո-  
րիկ մի գումար, իսկ փոք-  
րաթիւ խեղագիտերին,  
որոնք խելագուռ են այո-  
ւմարողը անճաշակութե-  
նից, կը թողնուի ազատ  
ընտրութիւն՝ կամ ձուլ-  
ելով մեծամասնութեանը,  
կամ էլ հեռուտատացոյցն  
առհասարակ չմիայնել:  
Տխուր ընտրութիւն է,  
քանզի ո՛չ առաջին, ոչ էլ  
երկրորդ ղէպքում իրա-  
վիճակը մէկ փոխուելու:  
Այսպէս ժենք երեւի յա-  
ւեթօրէն դատապարտ-  
ւած ենք ինչ-որ ստորա-  
կարգ չափանիշների յար-  
մարուելու եւ զրանցով  
կողմնորոշուելու՝ լաւն  
ու վատն որակելու,  
ստիպուած ենք անրո-  
վանդակալից եւ ընկ-  
ճուածութիւնից՝ րացի  
ոչինչ չպարզեւող ժապի-  
էշները՝ դիտել, ստիպ-  
ւած ենք անտաղանդ  
երգ ու հանգ լսել՝ գեղեց-  
կատես եւ ձայնագուրկ  
(րաուս ուղղակի կոմա-  
տով) երգիչների իմաստ-  
ամար, ստիպուած ենք  
ինքներս մեզ հերթական  
անգամ հարցնել, թէ ինչ  
սկզբունքով են ընտրե-  
լու՞մ հաղորդավարուհի-  
ներն ու «աստղերը» հայ-  
կական հեռուստատեսու-  
թիւնում՝ միայն արտա-  
քրնով, թէ՞, այնուամե-  
նայնիս, զրազրտու-  
թիւնն ու իմացականու-  
թիւնն էլ պիտի որոշիչ  
ղեր խաղան: Երբեւէ պի-  
տա գատուեմենք անպայ-  
մանօրէն ռուսիս երաժշ-  
տութեամբ ուղեկցուող  
զովագողներից՝ իւզի ու  
ձէթի, լուսաքի փողու,  
մանկական չորերի եւ  
սալին: Երբեւէ կ'առաջա-  
դրմեն զովագղ արտաղ  
րողները՝ նկարահանելով  
ոչ թէ անարտայայտիչ  
արտաքրնով երեխաների,  
զովագղային պարզու-  
նակ ղերն ասես վատ սեր-  
տած, ճղճղան ձայնով ու  
չինքնու դիմախաղով ղե-  
ր ա ս ա ն ու հ ի ն եր ի ,  
«Շուտարցնովփ Ռնդ շէն-  
քիլ ֆիւսթիվայ»ի գո-  
վագղային մեղեդու նշա-  
նարանի ներքոյ հանդէս  
կուղի կասածեմը՝ «գեղեց-  
կուհիների», մարդկանց,  
որոնք երջանկութիւնից  
չողարձակող պարզու-  
նակ կերպարանքներով  
կանգնուած ու յայտարար-  
ուում են, թէ՛ րախտն  
իրենց շահում է ուղար-  
կել՝ օ հազար դրամ, ու-  
ղեւորութիւն Գերմա-  
նիա, 1 արկը պաղպաղակ,  
լոթոյի լրացուցիչ տոմս-  
երբեւէ կ'առաջադրմենք  
մենք ու մեր «չուայլ»  
եռխտը. աննախաղէպ  
նրոյթներին այս տխուր  
ժամանակաշրջանից:

«Ա.զ.զ.»

STUDIO  
*Lantern*  
VIDEO FILM & VIDEO

• Կը ստանձնէ  
ուրախ  
առիթներով  
video  
նկարահանումներ

Շեռ. 01-266866  
ԷԼ 02-995399

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ԽՆԴՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՍԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ  
ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կերքերս Արաբական Միացեալ Եմիրութիւններու «Էամակարգման եւ Ետագոտութիւններու «Չայես» Կերդոն»ին հրաւերով Եմիրութիւններ մեկնած էր Եայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկի տնօրէն փրոֆ. Սիւրւայ Յովհաննիսեան՝ «Լեռնային Դարաբաղի տագմապն ու Անդրկովկասի անվրտանգութեան եւ կայունութեան հարցերը» նիւթով զեկոյցը ներկայացնելու:

Ն. Յովհաննիսյանն այս միջոցը ներկայացնող միակ գեկուցողը եղած է՝ համոզել գալով Ապու Տապիի մէջ հաւատարմագրութեան դէպքանաւորներու ներկայացուցիչներէ, քաղաքական գործիչներէ եւ լրագրողներէ կազմուած լսարանին առջեւ:

Ստորել կու տանք հայրենի «Ազգ» թերթին  
հարցազրույցը փրոֆ. Ն. Յովհաննիսեանի հետ,  
որ կը ներկայացնէ իր տուած գեկուցումին առ-  
թած մթնոլորտը եւ արդիւնքները:

ՀԱՐՑՈՒՄ.- Պրն. Յովնանինիսեան, յատկապէս  
ուրիշ մանրամասնութիւնների երանդրադառնում  
ձեր գեկույցը:

ՊՆԱՍՏԱՍԻՆ՝ Նախ, մինչեւ գեկուցումը, «Ջալալ»  
 լենարոնի տնօրէնն ինձ տեղեկացրեց, թէ ներկայ է  
 լինելու Աղրպէյճանի դեսպանը եւս, եւ ինչդրեց զերծ  
 մնալ սուր յայտարարութիւններէր: Նրանի յ պատաս-  
 անան պնդեցի, թէ կայ երեք կէտ, որոնց մասին անշը-  
 լանցելիօրէն խօսելու եմ օտար լսարանի առջեւ: Որ  
 Լեւոնային Ղարաբաղը եղել է Հայաստանի օրկանա-  
 լան մասը ըստ զարաշրջաններում, որ 1921-23  
 տարեկաններին անջատուել Հայաստանից եւ տրուել  
 Աղրպէյճանին, եւ որ այսօր Լեւոնային Ղարաբաղի  
 ժողովուրդն իրականացրել է ինքնորոշման իր իրա-  
 ռուէքը՝ տէ. Ֆալքթօ ստեղծելով պետութիւն: Առաւել  
 Համոզիչ լինելու համար գեկուցումս կազմել էի րա-  
 ղառապէս օտար աղբիւրներին յեկեղելով: Ելել էի այն  
 հանգամանքից, եւ լսարանն ընդհանրապէս տեղեկա-  
 լէն ինչորէն, եւ պատմական կտրուածքով նկարա-  
 րութիւնից հասել այսօրուան վիճակին՝ Հայաստա-  
 նի, Լեւոնային Ղարաբաղի Աղրպէյճանի դիրքորո-  
 ղումներին, Մինչդր խմբի առաքելութեանը: Յատուկ  
 ենթարժեքով զուգահեռներ էի անցկացրել դրա-  
 րաբան եւ իւրաքիչ-ապղբստոններն հակամարտու-  
 թիւնների միջեւ՝ նշելով, թէ դրանք ազգային կամ  
 վրոնական ընդթ չեն կրում, այլ, ինչպէս Հայերն,  
 յայպէս էլ պաղեստինցիները պայքարում են իրենց  
 պատմական ընթորաններում պետականութիւն  
 ստեղծելու իրաւունքի համար:

Ինձնից յետոյ խօսք խնդրեց Էմիրուժիկն աներուս  
Ազրպէյճանի նորանշանակ դեսպանը եւ Լեւոնայի  
Ղարաբաղը Ազրպէյճանի պատմական տարածք, հա-  
յերին նախադրածակ, ազրպէյճանական պատմական  
տարածանները ոչնչացնող անուանելով՝ լքեց դահ-  
լիքը:

Հ.- Իսկ քննականուր առմամբ ինչպիսի՞ն էր արձագանքը:

ՊՆ - Մնացեալ ըլլոր դեսպաններն ինձ հաւատացրին, թէ վերջապէս պատկերացում կ'ազմեցին աշխարհուած ղարաբաղեան հակամարտութեան, զրա զարգացումների վերաբերեալ:

Իսկ «Հասկ.ու» կենտրոնն ինձինք խնդրեց Հեռահա-  
յին Ղարաբաղի Հակամարտութեան թեմայի շրջա-  
նակներում 50 էջանոց նիւթ, որը կը Հրատարակի  
սեղ տարէն ու արաբերէն լեզուներով 3000 օրինակ եւ  
այլ արարածի ողջ արարական աշխարհում:

Հ. - Ինչպես էք բացատրում Արաբական Միացյալ Էմիրություններում սոյն գիտական կենտրոնի իսլամաեռնությունը՝ արժարծել զարաբաղեան հալամարտութեան հարցը:

դի. - Կարծում եմ, այստեղ մի քանի հանգամանք կայ: Նախ, Լեռնային Ղարաբաղի խնդիրը զուրա է հանդիսանալու, եթե միջնորդ երկրների փոքր խմբի օրջանակներին եւ ըօջափում է առաւել լայն շահերի զօրակցութեան, իժէ շրջանի անվտանգութեան, կառուութեան, հետեւաբար նաեւ՝ տնտեսական զարգացման հեռանկարներն առաջին հերթին պայմանաւորուած են Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմամբ: Երկրորդ, Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման եղանակները նրանք կարող են օգտագործել իսրայէլ-պաղէստինցեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում: Երրորդ, արտադրական աշխարհն անհանգստացած է կասպեան քաղաքական իրադրութեան անշուշտ գերագնահատումէն, որտեղ Դրա պաշարներն անշուշտ գերագնահատւած են, լայց, այլուհանդերձ, զգալի են: Այլ պարագայերի մօտացն համաշխարհային շուկայ կը փոխարինուի արտադրութեան հ մեծածախ իրադրութեան:

որդ զաշնակիցն է, վերջինս էլ Իսրայելի: Այնպէս որ, Հայաստանն արարներէի Համար կարող է զիտուել եթէ՛ն իր իր: Զեղեք հոգին զաշնակից, զոնէ՛ համարիլ երկրի: Զեղեք ինչ որ նախաձեռնութիւնն էլ թերեւս այս ծիրում պիտի վզնահատել իրրեւ առաջին քայլ: Յորանապում զուցե՛ն տաւր Հոգի կարող են իրենց նախաձեռնութեամբ Հաւաքուել ու գիտաժողով գումարել, իայց՝ ոչ Արարեալ կորն Միացեալ էմիրութիւններում: Բաւական է նշել որ մեզ Տրայբորդ կենտրոնը «Ձայլ»-ն է կուշտուել երկվորի նախագահի անունով, որի որդին վերապտնի զեկ կազմարն է եւ զրազննում է նաեւ վարչապետի տեղակարն պաշտօնը: Այնպէս որ, նախաձեռնութիւնները, արեւմտեան Հովանաւորութեան շրջանակներում էր:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐԵԱՆ,

«ll q q »

ԱՍՊԵՏ ՄԱՆԴԻԿԵԱՆ



որոնք այլ ժամանակ ամէն  
զօրաւորներէն էին, իրե  
նուաճումները շարունակ  
լով՝ մեծ ուժերով յարձա  
կան Եւթրոսիկոսանէս։ Այս









# ՄԱՐԶԱԿԱՆ



# -ԱՇԽԱՐՀ



## ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԲԵԹՊՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԱՐԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՅՈՐԴԱՆԱՆ

Կիրակի, 8 Յուլիսին Յորդանան մեկնեցաւ Լիբանանի պասքեթպոլի տղոց ազգային խումբը, իր մասնակցութիւնը բերելու Արեւմտեան Ասիոյ գօտիէն ներս տեղի ունեցող պտուսի դարձի մրցումներուն: Նշենք, թէ աւարտական հանգրուանի մրցումները տեղի պիտի ունենան 2ֆինաստանի մէջ:

Դարձի մրցումները, որոնք կը սկսին այսօր, կ'աւարտին 14 Յուլիսին: 2ֆինաստանի իր տոմար ապահովելու համար, Լիբանան իր կատարելիք չորս մրցումներէն պէտք ունի երկու յաղթանակի, այլապէս կրնայ դուրս մնալ մրցաշարքէն:

Ազգային խումբին մաս կազմող 13 մարզիկներուն շարքին են Ժոզէֆ Յոկըլ, որ վերջերս ստացաւ լիբանանեան հպատակութիւն:

Ստորեւ՝ ազգային խումբին մաս կազմող մարզիկները. Եասէր Համ, Էլի Մըշաքաֆ, Երանդ Սազեան, Ուալիտ Տըմիաթի, Ֆէտի Խաթիպ, Սի Սուարիքա, Դապի Պըսթանի, Ռոնի Ֆահտ, Ժոզէֆ Յոկըլ, Էլի Քասուֆ, Ռիշար Հըրիթ եւ Ժորժ Շիպանի:

Անոնց կ'ընկերակցին նաեւ, Ղասսան Ֆարէս (ֆետերասիոնին կողմէ նշանակուած նախագահ), Ժան Մամօ (ազգային խումբերուն նախագահ), ամերիկացի ճոն Նիւմըն (մարզիչ), Սարգիս Քորճեան (մարզիչի օգնական) եւ Ժիհատ Հատտատ (բժիշկ):

### ՖՈՒԹՊՈՒ

## ԱՐԺԱՆԹԻՆ ՇԱՀԵՅԱԻ ԵՐԻՏՐԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՈՆՏԻԱԼԸ



Արժանթին մարզիկները կը սօցեն իրենց յաղթանակը:

Պուէնոս Այրէսի (Արժանթին) մէջ տեղի ունեցող աշխարհի երիտասարդներու ֆուտբոլի Մոնտիալը (20 տարեկանէն վար) անցեալ շաբաթավերջին վերջ գտաւ հրաւրեմալ երկրին՝ Արժանթինի յաղթանակով, որ 40 հազար համակիրներու ներկայութեան 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ղանան, չնորհիւ Տիեկօ Քուլթիոյի (6րդ), Խաւիէ Սալիոյի (14րդ) եւ Մաքսի-Միլիանօ Ռոսարիկէզի (73րդ) կողմէ նշանակուած կոմբոն:



Խաւիէ Սալիոյ իր նշանակած կողմէ տոք:

Հիւրընկալ երկրը՝ Արժանթին արժանի էր ախտախն, որովհետեւ անիկա մրցաշարքին մասնակցող Ինացեալ կազմերէն բոլորովին տարբեր խումբ մըն էր եւ միջին հաշուով իւրաքանչիւր մրցումի ընթացքին նշանակեց չորս կոլ:

Այսպիսով, Արժանթին յաջողեցաւ չորրորդ անգամ ըլլալով բարձրացնել բաժակը: Առաջինին անիկա շահած էր բաժակը՝ Տիեկօ Մարատոնայի օրերուն (1979ին), երկրորդը 1995ին՝ (Քաթարի մէջ), իսկ երրորդը՝ 1997ին՝ (Մալեզիոյ մէջ):


Արժանթինի երկրորդ կոլը նշանակած Սալիոյ ոչ իրան հանդիսացաւ մրցաշարքին կոլաբորը (ան նշանակեց 11 կոլ), այլ նաեւ եղաւ մրցաշարքին պատմութեան մէջ ամէնէն աւելի շատ կոլ նշանակող մարիկը:

Շատ հաւանական է, որ Արժանթինի եւ մրցաշարքին լաւագոյն մարզիկը ընտրուած Սալիոյ մրցաշարքին աւարտէն ետք միանայ Պարսելոնայի, փոխան 22 միլիոն տոլարի: Նշենք, թէ ան մաս կը կազմէ Իվլը Փէյթի:

Երրորդ դիրքի մրցումին համար Եպիպոս 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Փարակուէլը, Նորհիւ՝ Մոհամէտ Եամանիի կողմէ նշանակուած կոլին (64րդ): 89րդ վայրկեանին դանացի մարզիկ Ապիլ Իպրահիմ փենալթի մը իր նպատակին չկրցաւ ասցնել:

### ԹԵՆԻՍ. ՈՒՒՄՊՈՒԼՏԸՆ

## ԿՈՐԱՆ ԻՎԱՆԻՍԵԻՉ ԱՐԺԱՆԱՅԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ



Իվանիսեիչ ուրախ իր շահած բաժակով

Ստորեւ՝ տղոց եւ աղջկանց վերջին 20 տարեան ախոյեանները.

### ՏՆՆԱԸ

- 1982 - Ճիմի Քանըրլ (Մ. Ն.)
- 1983 - Ճոն Մաքընրօ (Մ. Ն.)
- 1984 - Ճոն Մաքընրօ (Մ. Ն.)
- 1985 - Պորիս Պէքըր (Գերմանիա)
- 1986 - Պորիս Պէքըր (Գերմանիա)
- 1987 - Փէթ Բէշ (Աւստրալիա)
- 1988 - Շթեֆան Էտպերկ (Շուէտ)
- 1989 - Պորիս Պէքըր (Գերմանիա)
- 1990 - Շթեֆան Էտպերկ (Շուէտ)
- 1991 - Մայքըլ Սթիչ (Գերմանիա)
- 1992 - Անտոն Եկասի (Մ. Ն.)
- 1993 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 1994 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 1995 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 1996 - Ռիչըրտ Քրայչէք (Հոլանտա)
- 1997 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 1998 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 1999 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 2000 - Փիթ Սամփրաս (Մ. Ն.)
- 2001 - Կորան Իվանիսեիչ (Խորուաթիա)

### ՕՂՋԻԿԵՐ

- 1982 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1983 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1984 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1985 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1986 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1987 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1988 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1989 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1990 - Մարթինա Նաւրաթիլովա (Մ. Ն.)
- 1991 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1992 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1993 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1994 - Քոնչիթա Մարթինէլ (Սպանիա)
- 1995 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1996 - Շթեֆի Կրաֆ (Գերմանիա)
- 1997 - Մարթինա Հինկիս (Չեխիա)
- 1998 - Եանա Նովոթնա (Չեխիա)
- 1999 - Լինտա Տեվլինփորթ (Մ. Ն.)
- 2000 - Վինըս Ուիլիքմս (Մ. Ն.)
- 2001 - Վինըս Ուիլիքմս (Մ. Ն.)

### ՀԵՃԵԼԱՐՇԱՆ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱԶԲ

## ՈՒՈԹԷՐՍ ՇԱՀԵՅԱԻ ՉՐԴ ՀԱՆ ԳՐՈՒԱՆԸ ԵՒ ԳՐԱԻԵՅ ՊԱՐԱԳԼՈՒԻՒ ԴԻՐՔԸ

Յրանսայի շրջավայրին 2րդ հանգրուանը, որ տեղի ունեցաւ երեկ, Քալէն (Մեքսիկո (220,5 քմ.), վերջ գտաւ պէլճիքացի Մարք Ուոթերսի յաղթանակով: Ան արձանագրեց 4 ժամ 35 վայրկեան եւ 47 երկվայրկեան արդիւնք մը:

Ուոթերս, որ իր արձանագրած այս յաղթանակէն ետք գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, հազուելէ ետք դեղին շապիկը, ժամանան գիծէն առաջ փրկիւնով յաջողեցաւ գերապանցել Սրնօ Փրեթոն, որ հանդիսացաւ երկրորդ:

32 տարեկան պէլճիքացին, որ 9րդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէր Յրանսայի շրջավայրին եւ առաջին անգամ ըլլալով կը շահէր հանգրուան մը, իր այս կատարած իրագործումէն ետք յայտնեց, թէ

### ԹԵՆԻՍ

## ԱԼԵՔՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ ՇԱՀԵՅԱԻ Ա. ԹԷ. ՍԷ. ԷԼ.Ի ՄՐՑԱՇԱՐՔԻ ՏԻՏՂՈՍԸ


Անցեալ շաբաթավերջին վերջ գտաւ Ա. Թէ. Սէ. Էլ.Ի մէջ տեղի ունեցող թեմիսի տղոց եւ աղջկանց մրցաշարքը, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերէին լիբանանցի մարզիկներ, Գլատի ունեցաւ, որ մրցաշարքը տեղակաց չէր:

Տղոց տիտղոսին տիրացաւ Ալեքս Յարութիւնեան, աւարտականին 6 - 3 եւ 6 - 4 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Փաթրիք Շըքրին:

Իսկ աղջկանց տիտղոսին տիրացաւ Լէալ Սաուայա, աւարտականին պարտութեան մատնելէ ետք Սաւաա Քըրթասը՝ 7 - 6, 3 - 6 եւ 6 - 3 արդիւնքով:

## ՖՐԱՆՍԱՅԻ ԶԻՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԵՆ «ՍՈՒՂ» ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏԸ

Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբին փլեյմէյթըրը՝ Զինետին Զիտան հանդիսացաւ աշխարհի ամէնէն «սուղ» մարզիկը, երբ Եուզենթուսէն միացաւ Ռէալ Մատրիտի, փոխան՝ 64,5 միլիոն տոլարի, չորս տարուան պայմանագրով թիւն մը ստորագրելով Սպանիոյ մայրաքաղաքի ախոյեան կազմին հետ:



Զինետին Զիտան

Աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Ֆրանսայի ազգային խումբին մաս կազմող

29 տարեկան Զիտան, Ռէալ Մատրիտի պատուով նախագահ Ալֆրէտօ Տի Սթեֆանոյէն իր նոր ախոյեան շապիկը ստանալէ ետք, թղթակիցներուն հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ իրեն համար մեծ պատիւ մը պիտի ըլլայ կրել Ռէալ Մատրիտի նման ախոյեան մը շապիկը:

Մէկ տարուան ընթացքին, Ռէալ Մատրիտ երկրորդ անգամ ըլլալով մարզիկներու փոխանցման մէջ մրցանիշ մը կը հաստատէ: Անցեալ տարի անիկա Լուիս Ֆիլիպի փոխանցման համար Պարսելոնայի վճարած էր 56 միլիոն տոլար:

Իր նոր կազմին միանալով, Զինետին Զիտանի տարեկան պանծելիք գումարը պիտի ըլլայ 5 միլիոն տոլար:

Ստորեւ՝ փոխանցման մրցանիշ հաստատած տասը մարզիկները.

- 2001 - Զինետին Զիտան (Եուզենթուսէն) Ռէալ Մատրիտ 64,5 միլիոն տոլար
- 2000 - Լուիս Ֆիլիպ (Պարսելոնայէն) Ռէալ Մատրիտ 56 միլիոն տոլար
- 2000 - Հերնան Գրեթօ (Փարմայէն) Լացիօ Ռոմա 54 միլիոն տոլար
- 1999 - Քրիսթիան Վիէրի (Լացիօ Ռոմայէն) Ինթեր Միլան 50 միլիոն տոլար
- 2001 - Ճիանլուիճի Պիլֆոն (Փարմայէն) Եուզենթուս 46 միլիոն տոլար
- 1999 - Նիքոլա Անելթա (Արսենալէն) Ռէալ Մատրիտ 35,5 միլիոն տոլար
- 1997 - Տենիլսոն (Սան Փաուլոյէն) Ռէալ Պէթիս 35 միլիոն տոլար
- 2001 - Ռուրի Քոսթա (Ֆիորենթինայէն) Ա. Սէ. Միլան 35 միլիոն տոլար
- 2001 - Լիլիան Թիւրամ (Փարմայէն) Եուզենթուս 35 միլիոն տոլար
- 2000 - Կապրիէլ Պաթիսթուլ (Ֆիորենթինայէն) Ա. Էս. Ռոմա 34 միլիոն տոլար

իրապէս, որ իրեն համար երազ մը կ'իրագործուէր, մասնաւոր իր երկրին մէջ շահելով այդ մէկը:

Այսօր, տեղի կ'ունենայ 3րդ հանգրուանը՝ Անվերսէն Սըրէնկ (198,5 քմ.):

Ստորեւ՝ 2րդ հանգրուանի արդիւնքները.

- 1.- Մարք Ուոթերս (Պէլճիքա) Ռապոպանք 4 ժամ 35' 47"
- 2.- Սրնօ Փրեթօ (Յրանսա) Ֆեթիսիս (նոյնը)
- 3.- Ռուպի Հուրթըր (Հարաւային Աֆրիկէ) Լամփրէ - Տայքին (նոյնը)
- 4.- Սերվէ Բնաւէն (Հոլանտա) Տոմօ - Ֆարմ Յրայթց (նոյնը)
- 5.- Սիւրբի Օկրէյտի (Աւստրալիա) Քրեմի Սկրիքոյ (նոյնը)

